

Արդ, Տրովադայի հերթոներէն Ագամիման ու Եղբայրը՝ Մենելաս, Աքայեցիներէն, քայլ ծնած են փոխւղիացի հօրմէ:

Աքայեցիք տարածուած էին Թեսաղիայէ մինչև Կիլիկիա, ուր հիմնած են լուրնց մայրաքաղաքներէն մին, Ընդարձակ մատենագարանով մը, լի հնդեւրոպական հիսացի լեզուով ու սեպածեւ տառերով գրուած բազմաթիւ պիտիտներով:

Պատմաբան Ռ. Վեյլ<sup>(\*)</sup> կը պնդէ, թէ Սեւ ծովի հիւսիսային եզերքը չըջան ըսելով Բալկանեան թերակզին դազթող Հնդեւրոպականներու արեմտեան արշաւախումը՝ Խլիւրիայէ, Եպիրոսէ ու Խեսաղիայէ անցնելով ծնունդ տուած է Հելլեններու. իսկ նոյն զազութին որեւելեան արշաւախումըը նախ կանգ տուած է Թրակիա, և՝ ժամանակ մը Ետք՝ Եզէակոն ծովին հիւսիսային կողմէն Ասիա անցնելով հաստատուած է փոխւղիական երկրամասին մէջ: Արեմտեան արշաւախումըը կազմողները կը կոչուին «Աքայեցիք», իսկ Թրակիափախուղիացիք՝ ինչպէս կը տեսնուի, մօտիկ ազգական են եւրոպական ծովեղերքի Հելլեններուն: Այս ազգականութիւնը կը հաստատուի նաև երկու արշաւախումընը լեզուաց ազգակցութեամբ: Արդ, Ռ. Վեյլ աւելի հեռուն մզելով ազգակցական այս կապը, պատմաբան Ե. Մէյերի հետ կ'ընդունի, թէ հայեւեն լեզուի հետ ալ կոտ ունին այդ լեզուները, կազմելով քականի խցեւնայիկան խումբ մը, քանի որ հայք իրենց արդի հայրենիքին մէջ հաստատուելէ յուսած ընակած են նաև Փոխւղիոյ-Քիւթանիոյ մէջ<sup>(\*\*)</sup>:

Ա. Մէյեր նոր կարծիքով՝ նորագիւտ տոխարերէնի ու Քիուացւոց լեզուի միջեւ խնամութիւնը հաստատուելով, անոնց ազգակցութիւնն ալ երեան կ'ելլէ իտալական ու կեղտական լեզուաց հետ. հետեւարար, իտալեկեղտական լեզուները խնամութիւն կ'ունենան հայեքիտական լեզուներու հետ:

Պարիս

Դ. Յ. ԲՈՍՄԱԶԵԱՆ

## ՆՇԽԱՐՔ ՆԱԽՆԵԱՑ

### ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ

#### ՅԱՒԵԼՈՒԱԾ

Ի ՎԵՇՏԱՍԱՆ ԱՍԱՑՈՒԱԾՍ Ս. ԵՓՐԵՄԻ  
ՎԱՍՆ ՆԻԿՈՄԻԴԵԱՅ ՔԱՂԱՔԻ

Վեշտասան Ասացուած Արքայ Եփրեմի վասն Նիկոմիդեայ խորի վաղ իսկ Սիոն Ամապրի, լրեաց 1927-1930 տաս, հրաւակեցան, որ եւ յանգ ելին յէջ 59 Սիոնի Դ. Տառւոյ (1930):

Ի նմին ձեռնազիր մատենի, զոր կանչառ ի սկզբն հետարակուրեան վերասահեալ Ասացուածոց (Սիոն 1927, էջ 314) յիշեցի, անդէն զինի նոցին զայ այլ ինչ զրուած՝ վերապրեալ «Ասացուած Առաջին. Վասում Յանշիմանուրեան», որ սկանի ի բդ. 369թ վերոյիշեալ ձեռագրին եւ ի զուլու ելանի բդ. 385թ ի սուրեւ իշին. բերակատար, զի շարունակուրինն պակաս:

Սոյն այս Ասացուած առած երկմուրին է երկ Ս. Եփրեմի Ասուրոյ, ցարդ անձանօր. իսկ բովանդակուրիւնն նառէ զբաղացին որ կորեաւ. սակայն չե՛ յայ ո՛ր հազոր:

Հ. Դար. Վ. Զարբինապեան յիւրում ամատենապարանի Հայկական բարգմանուրեաց Նախնեաց (Վինեսիկ 1889, էջ 464-465) վրիպանօֆ համարեցաւ թէ վերասայ Ասացուած Առաջին վասն Յանշիմանուրեան մասն է Վեշտասան Ասացուածոց վասն Նիկոմիդեայ խաղափին: Բայց սակայն կարծիքի այլ, որպէս յառաջապնի իսկ ի Յուշարձամի Միխրարեաց (Վինեն 1911, էջ 205) ասացի, ակնեւել արդիւնք են բիւրիմացուրեան:

Վերագոյն նառեալ Ասացուած Առաջին վասն Յանշիմանուրեան գրեալ է յերկուց զրցաց, որ այլ են նաև զգրիս Վեշտասան Ասացուածոց Վ. Նիկ. Ժ. Ի միոյն գրեալ են առաջին երկուին եօդ եւ երկու տող իշին եւրորդի. իսկ անմի սկսեալ մինչեւ ցկաւարած Ասացուածոյն գրեալ է յայլմէ գրչէ, այլակերպ եւ զունաս բանակաւ: Դիրն է բն-

(\*) R. WEILL, ի բերքին Journal Asiatique, 1930, Janvier-Mars:

(\*\*) E. MEYER, Geschichte der Altertums, II, β, (1909), էջ 613-617:

լորդիր, խոշոր եւ նույազ յարդարուն: Համամատօսուրիսն են ըստ կարգի սովորութեան: Աւրեմ ուրեմ սրբազրեալ են վրիպակի բնագրին, որոյ ոն բանից ըստ ամենայնի նմանն ոնոյ Վեշտասան Ասացուածոց: Երկողունց գրուածոց ակն յանդիման նոյն է եւ ուղղիչն (Ներակա Լամբրոնացի):

Եւ արդ՝ ի դեպ համարեցայ զայս եւս դոյլնազիւս չենալ Հայ. Թարգմանուրիսն նախնեաց, իրեւ յաւելուած ի Վեշտասան Ասացուածու Արքայ Եփրեմի վասն Եփրուիդեայ խորացի, աստ աւասիկ ի լոյս ածել, յաւելեալ զպիսոյ ձանօրուրիւն:

### ՅԲՔԵՏԵՐԻՔ Յ. ՄՈՒՐԱՏ

Յուրպիկ, Փետրուար 1930:

\* \* \*

### ԱՍԱՑՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ.

### ՎԱԾՆ ՅԱՆԴԻՄԱՆՈՒԹԵԱՆ

Ցաւ (<sup>1</sup>) ասել ստիպէ՛ զիս, և կարգն լուել հրամացէ: Քանդի ինչ որ չատ իցէ, թէպէտեւ անոյշ իցէ, չէ՛ անոյշ: ինչ որ չափով է, չայեկա՞ն է, ինչ որ չափով է, անոյշ է: Որովայն վասն զի փոքր է, չափով առնուլ աւգնէ նմա: միտք չեն իրբուր զորովայն, զի մեծ է ծոց իւր քան ըզչափ: և չափով և առանց չափոյ, կարէ առնուլ գուսումն, բայց ձանձրանալով փոքրկանայ ծոց մեծ խորհրդոց: Եթէ փախիցէ ձանձրութիւն յոտողէն և ի լոողէն, աճէ բանն և սփոխ, աճէ ունկն և ընդարձակի՛: Մի ձանձրասցին լսելիք մեր ճառիւ քաղաքին որ կորեաւ: Լի՛ են ճառք իւր աւգնութիւնք, առաւել լա՛ւ են քան զգեղս: զի զեղք զմարմին բժշկեն, նոքա զմարմին և զողի: Կորեաւ քաղաքն, և կորեա՞ն չարիքն որ ծածկեալ էին ի նմա: Եկայը կորուսցուք զչարիս մեր, զի մի՛ կորիցուք ընդ չարիս մեր. Հեղձաւ ի նմա նախանձ ի հեղձեալսն, զի չի՛ք ոք որ հարկանէ զաղու. ուժացաւ, քանդի չի՛ք անդ կանայք աներք և հարճք. Ցասումն չերմու ցածաւ, զի ուժացաւ ամենայն քաղաքն. ցանկութիւն բորբոքեալ յափեաւ,

յո՛յծ և ի ցուրտ զիակունս: Նախ քան ըզփոքքը մի վասեալ էր, զի հայեցաւ ի նորարկութիւն՝ չիջա՞ւ: Բնկեցեալ էայ հըպարտութիւնն, զի չի՛ք ոք որ զգենու զնահանդերձիք: Երկու սուսերս զգենու լըկտին, զհանդերձ և գհապտրութիւնն ընդ նմին. Կորեան պաձուածանք անմիտ կանանց, չիթ որ ամենակին պակասութիւնն է: Կորեան կոածոյք փափիկասուն կանանց, տհոսիլ որ լի՛ է զայթազզութիւնն մըք: Խոտան և անարդ արամըք գայթազզին ոտք յերկրի, և ականակապ զարգուք լիտեաց գայթակղին աչք անմեղաց: Կաւշիկ (<sup>4</sup>) սէգ ծանրցաւ երկրին որ բարձեալ ունէր զլերինս: ոչ ծանրացան նմա լերինքն իրբե զլետի կաւշիկն որ կոխէր զնա: եթող մարգարէն զամենայն զարգս, և զկաւշիկն եեթ յանդիմանեաց: Վասն պիղծ կաւշիկն ասէ վաճառեցին զարգարն արծաթոյ, Բնդ այս պատգամ նայեաց, ո՛ լիտի յայրատ և սէգ: եթէ ոչ կաս ի գուրութեան նորա, երթ հարց զմեկնութիւն նորա: ոչ եթէ մոռացայ ինքեան քեզ և վասն այնր յայրատեալ ես, զիտես զգաւրութիւն կաւշիկի, վասն այնորիկ զինեալ են նովաւ: Կաւշիկն (<sup>2</sup>) որ կաքաւեաց ի բազմականին, հաշատ զզլուին յովհաննու: կաւշիկ աղճականն սպան զուրբը քարոզն: ամլորդին մեծ էր քան զամենայն մարգարէս, և կաւշիկն փոքր սպա՞ն զնա: կաւշիկն պճնեալ եղեւ որոգայթ և որսացաւ (<sup>3</sup>) զամենայն բազմականն: եմուտ սէր նորա ի մէջ մըտաց, և ա՞ռ ի նմանէ զրաւակոն (<sup>4</sup>) զերգումն, որ ոչ լուծանի, վասն չարեաց որ ոչ քաւին, առաքիաց զգլուխ բազմականինն և երարծ զզլուխ քարոզին: Անարգեցէ ուն զսէգ կաւշիկ, զի բարկացուցին ոտք ի բազմականին: երկիր յայրատ ի բարկութեանէ, և արգել փոքր մի ի զարգարելոց: մի համարիր զկաւշիկ սէգ եթէ սակաւ ինչ մեղք իցեն: եթէ ոչ զիտես զվեսան նորա, լուր զաղէտան որ եղեւ նովաւ:

(<sup>1</sup>) Աստի սկսեալ յայլմէ զրչէ զրեալ է, նույազ յարգարուն խոշոր բոլորզով և փորր ինչ զունատ սեւաղեղով:

(<sup>2</sup>) Յօր. զրեալ է՝ կաւշիկ նոր:

(<sup>3</sup>) Բառու բերեալ չնշեալ էր, ապա ի մեռն ուղղին փորր բոլորզով զրեալ է՝ որսացաւ:

(<sup>4</sup>) Յօր. վրիպանօր ունի գրաւարական:

(<sup>1</sup>) Յ կարմրադեղով մեծ զիսազիր:

նայն մեքենայիւք ընթացաւ հերովդիւյ և պարտեցաւ : Արոգայիմս բազումս կազմեաց , և ոչ ըմբռնեաց զյովհաննէս : արծաթ և ոսկի եռ կաշառ , և ոչ կարաց սպանանենք<sup>(1)</sup> զքարտղն : զգլուխն զոր ոսկի ոչ գնեաց , կաւշիկ սէզ եհատ կաքաւելով : Ոսկի կոտորիչ տրդարոց , ոչ կարաց յաղթել յովհաննու , պարտեցաւ կոչառ կուրացուցիչ , զի կաւշիկն կուրացոյց զուչո : Իթէ զաջո թագաւորին կուրացոյց և նշմարեաց թէ զո՞ սպանանէ , քանի՞ ևս կուրացուցանէ զմանկտի , զի կործաննեցին ի խորխորատ : Լուայք և զողացէք զիրզ կանայք , զի վասն կաքաւելոյն մեռաւ յովհան : Բնդ նորա մեղսն զարմացեալ ես , և զնոյն ձեւ կաշկիս ազանիս : Բնդ արհաւիրան զոր փորձեաց զարհուրեալ ես , և նմա՞ն է կաւշիկ քո կաւշիկ նորա : Բնդ նորա կաքաւելն ցասուցեալ ես , և զու նմա՞նես զնոցից նորա : Մի բեկումն երեկ նա , մի՞ մեղսնչեր զու բազմաց : Ապականնն հովիւք ըգդան որ իմաս տանէ ի հաւտի : Խոկ մեր հովիւք և ոչ բարբառ արկաննն զինի զաղանաց : Ի նմին խաշնէ ես զու , մի լինիր նմո հակառակի : Լեր տւրով<sup>(2)</sup> ի մէջ հաւտին , մի լինիր ի նմա զաղան : Քանի՞ համբրեցէ ամէնարածն<sup>(3)</sup> , զի տեսանէ զինատ հաւտիս իւրօյ : Սպանացեալ են մեզ առարածք , զի բարկացուցա՞ք զարարիչն : Ահա զողոց ընդ մեք երկիր , զի ո՞չ զողացաք մեք ի վերնոյն : քարանձաւք բարձունք պատառեցան , զի անց ըստ նոցա բարձրութիւն մեր խոնարհեցան բարձունք , զի մեք խոնարհեցո՞ւք ի բարձրութինէ : Խլեցան և ծառք , զի խլեցուք զչար սովորութիւնս : Խլեաց բարկութիւն զտունկըս , զի մեք խլեցո՞ւք զչարութիւնս : Հարին փայլատակունք և ցամաքեցին , զի կոկղացին սիրաք քարեղէնք : Խաւարեցան լուսաւորք յերկինս , զի տեսցուք ի խաւարի զգայթագութիւնս մեր : Ի ժամուն իբրև խաւարեաց լոյս , ետես ամենայն ոք զարատս իւր : զի ոչ տեսանէաք մեք ի լուսոյն , խաւարեաց լոյսն , զի տեսցուք ի նմա : Եղեւ այս առ մեզ մտւատ , զի

հաւտասացուք հեռաւոր համբաւին : Սակաւ արշաւաւքս երկիցուքս երկիցուք , զի զուցէ եկեցին խիստ տանջանք : Սակաւ արհաւորքն քարովիցին , թէ ապաշխարութիւն պիտոյ է , ոչ աւուրց ապաշխարութիւն , այլ ամաց եւ ամսոց : Մի մի աւր ապացուք զծանրութիւն , եւ ի միւսում աւուր ընկեցուք զնա : Միախառն բարձրուք զվարըս , զի եղեցին պաշարք ճանապարհին մերոյ : Լաւ են սակաւ ընթացք մշտնջեան , քան զյորդ ընթացս միոյ աւուր : Սակաւ չահ մշտնջեան կարէ լինել գանձ մեծ : Արպէս զի ի ցան եւ ի ցիր կաթոյ<sup>(4)</sup> յորդի սաստկանայ հեղեղ մեծ : Եկայք թերացուացուք փոքր փոքր յառաջին սովորութեանցըն : Թէ ոչ կարես լինել պահող , մի՞ լինիր կերացող<sup>(5)</sup> : Հատ փոքր մի ի կերակրոյն քումմէ , եւ ահա պահք քո առ սեղան քո : Մի՞ պահեր քեզ ի վաղիւն զոր հուտեր յորովայնէ քումմէ : Տուր զնա միշտ կարաւելոց , եւ ահա լցիր զտեղի պահոց : Եթէ ոչ կարես պահել ի գինւոյ , մի՞ արքէ զքեզ զինին զոր արքեր : Ոչ գագարէ ի քեզ զինին որպէս գագարեալ կայր յամանին : Յայլ իրս ածէ զքեզ ըմբել զքեզ յորժամ ըմբես զնա : Գիտա<sup>(6)</sup> որ բուռն է քան զըմիտս քո , ի մէջ բազմաց պարտեալ լինիս : Մի՞ մուրտնջիր զու<sup>(7)</sup> , միայն ա՞ռ զինի որ բուռն է քան զքեզ : Արցեն ընդ քեզ որրք , եւ ահա յաղթեցեր նմա ընդ բազումման : Պարտի զինի սակաւ ի մէջ բազում ըմբողաց :

Ծարունակելի

Ֆ. Յ. Մ.

### ԽՈՐՃՈՒՐԴԻ ԵԿ ԽԾՍՔ

Կեանիի իմաստը ուրիշի համար ապրելու մէջն է :

\*

Տարիի յաւաշանալը պատճառ բոնելով , մի դադրի նոր բաներ սովորել . ընդհակառակը , սովորել նոր բաներ որպիսի նորողուած անհասականութեան մը Տեր դառնաւ :

(1) Անսովորական հոլովումն :

(2) Նորածել բառ :

(3) Այսպէս յօր :

(4) Գուր ի լուսանցս յաւելեալ յուղջին :

(5) Նոր ինչ բառ , որ չի բառ զիրայ :

(6) Օր . ունէր սպանել . ուղղին յաւելու ան ի վերայ բառին :

(7) Թուր թէ = որոշ :

(8) Նոր ինչ բառ , որ չի բառ զիրայ :